ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի պատասխան Ձեր 31.07.2026թ. հ. 172-2026թ. գրության՝ Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոցի հ.11 շենքի 1-ին մուտքի և տանիքի վերանորոգման վերաբերյալ, տեղեկացվում է.

Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոցի հ.11 շենքի 1-ին մուտքի տանիքում խնդիրն օդատար համակարգի անսարքության պատճառն էր, որը շենքը կառավարող մարմնի /համատիրության/ կողմից վերանորոգվել է:

Ինչ վերաբերում է մուտքի վերանորոգմանը, ապա այն համատիրության կողմից վերանորոգվել է 2025 թվականին, սակայն բնակչի կողմից կատարվել է տան մուտքի դռան փոխարինում, որի պատճառով դռան շրջակայքը վերանորոգման կարիք ունի: Մեր կողմից տեղեկացվել է շենքը կառավարող մարմնին, որն էլ պարտավորվել է նշված հատվածը վերանորոգել 10-օրյա ժամկետում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ